ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Ե. ՇԱՀԱԶԻԶ

ԾՈՎԱՆԿԱՐԻՉ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՅՎԱԶՈՎՍԿԻ[1]

Ծավանկարիչ Հովհաննեսը իբրև նկարիչ մի մեծ տաղանդ էր, բայց իբրև մարդ և հայ մարդ, դիտության տեսակետից պակասավոր էր։ Նա մի բարի, հյուրասեր, իր ազգը սիրող մարդ էր, բայց իր ժողովրդի պատմության, նամանավանդ նորագույն բազմակնճիռ պատմության հետևած, միջամուխ եղած մարդ չէր, և եթե այս բոլորին ավելացնենք , որ նա խանդակաթ սիրով սիրում էր իր եղբորը և մեծ կարծիք ուներ նրա դիտության և գործունեության մասին, կարծում եմ, որ բոլորովին պարզած կլինենք նրա դեմքը այդ խնդիրներում։

Մենք հասանք փակված դպրոցի մեծ շենքին։ Մեզ առաջնորդում էր Մազերովը, որ ճիշտ մոտեցումն ուներ դպրոցի բացման և փակման խնդիրներին։ Շենքը գտնվում էր քաղաքի կենտրոնից հեռու, ծովեզերքի մոտ, մի ընդարձակ բաց տարածության վերա։ Թույլ հսկողություն էր շենքի պահպանությունը. դիշատիչ ձեռքերը անապատ էին դարձրել այն։ Այդ հանգամանքը տխուր տպավորություն թողեց մեզ վերա։

Բաց արին դպրոցը և մենք ներս մտանք։ Տակավին աշակերտների վերարկուները կախված էին պատից վեր բարձրացող երկաթե սանդուղքի մոտ։ Վեր բարձրացանք, բոլոր դասարանները շրջեցինք, մտանք մեծ դահլիճը։ Հիանալի տեսարան էր բացվում մեծ լուսամուտներից դեպի ծովը։ Շրջեցինք և մյուս սենյակները, ննջարանները, սեղանատունը և այլն և այլն։

Շրջում էինք լուռ ու մունջ, ճնշված սրտով, ծանր թախիծով։ Ո՞րքան աշխատանք, ո՞րքան նյութական միջոցներ էին ծախսված։ Մեռած, խամրած դպրոց էր և մենք ման էինք գալիս, խոսելով մենք մեզ հետ, մեր սրտի հետ։ Խղճուկ հայ դպրոց էր, որ ծնվել էր դժգոհության ու խռովության մեջ, ապրել էր դժգոհության ու խռովության մեջ և փակվել էր դժգոհության ու խռովության մեջ։ Ո՞վ էր մեղավորը։ Կարդացե՛ք «Հյուսիսապայլ»ը, «Երկու տող»ը, «Մասյաց աղավնի»ն...։

Վերադարձանք սրտակտուր։ Ծովանկարիչը հարցրեց ինձ.

— Տեսա՞ք դժբախտ Խալիբյան դպրոցը։

— Է՜հ, տեսա,— պատասխանեցի։

Նա հասկացավ իմ հոգեկան կացությունն և այդ մասին այլևս խոսակցությունը չշարունակեց։ Ո՛չ ոք այնպես սրտանց չի ողբացել փակված Խալիբյան դպրոցը, ինչպես ռուս պատմաբան, հրապարակախոս Միխայիլ Պետրովիչ Պոգոդինը (1800—1875 թ. թ.)։

Մի օր էլ երբ մենք հավաքված, նստած էինք Այվազովսկու մոտ պատկերասրահում և զրուցում էինք մեր անցյալի մասին, նա ուրախ տրամադրությամբ վեր կացավ տեղից և ասաց.

— Տղա՛ք, շլլար, շատ զրուցեցինք մեր տխուր անցյալի մասին։ Այսօր ես կուզեմ ձեզ հետ մի թեթև Ղրիմի խորոված ուտել։ Հրամեցեք իմ վիլլայի պատշգամբը, երեկոյան ես իմաց կուտամ և մեր սիրելի Մազերովին ալ։

Մենք գնացինք ճաշելու ակումբը։ Կերածներս ձկնեղեն էր, Ղրիմի Սև ծովի համադամ ձկնեղենը— կեֆալ, մի աչքանի կամբալա, մանր սուլդանկա։ Ղրիմում ձկների առատ տեղը համարվում է Բալակլա քաղաքը, որից երևի և ստացել է իր անունը՝ «Բալըկլու»։

Երեկոյան շատ ուրախ ժամանց ունեցանք ծովանկարչի մոտ. խորոված շատ համով էր, գինին էլ մի փոքր դառնություն ուներ և միջակ կտրկություն։ Շատ խմեցինք, բայց

1. Շարունակված նախորդ համարից։

չարբեցանք։ Տնատերը մեծափառ ծովանը-կարիչ Այվազովսկին չէր, այլ բարի, հյուրասեր Հովհաննեսը։ Նա ասում, խոսում, ծիծաղում էր, ուրախանում և մեզ էլ ուրախացնում։ Մազերովը շատ խիստ թամադա էր։ Տիկինը, որ սովորաբար քիչ էր խոսում և շատ լսում, այսօր լեզուն բաց էր արել, մի հանգամանք, որ ավելի հարմարվում էր նրա գեղեցկությանը։ Վերջին բաժակաճառը ինձ բաժին ընկավ խոսելու։ Գինին մի բաժակ ավելի էի խմել և խոսեցի տաք տաք և քաղցրաշուրթ։ Գովեցի ծովանկարչի բարությունը և այն մեծ հյուրասիրությունը, որով նա ընդունել էր ինձ՝ օտարականիս։ Ես այդ հանգամանքը վերագրեցի ոչ իմ արժանիքիս, այլ մեզ հյուրասիրողի սիրած ա՛յն գործին, որի համար ես եկել եմ քաղաքս։ Գոհություններ և հազար հազարան շնորհակալություններ հայտնեցի նրան՝ ինձ մատուցած թանկարժեք օգնության համար։ Հետո, իմ խոսքս դարձնելով տիկնոջը, ասացի. «Դուք ներեցեք ինձ. երբ ես առաջին անգամ տեսա ձեզ պարկեշտ, քիչ խոսող, շատ լսող, կարծեցի, որ այդ արտաքին երևույթ է միայն, բայց հետո ես համոզվեցի, որ այդ հանգամանքը հատուկ է ձեր բնավորության, իսկ այսօր դուք մնալով պարկեշտ, փոխվել եք, ասում, խոսում, ուրախանում եք մեզ հետ. մի վարմունք, որ, պիտի ասեմ, ձեզ, ձեր կացության, ձեր տարիքին ավելի է վայելում,— և, մեջ բերելով մեր վաղեմի ասացվածքը՝ «Կին ժրագլուխ պսակ է առն իւրում»,— ցանկացա նրան իր ամուսնու թագն ու պսակը դառնալ։ Մազերովը իմ մեջբերած գրաբար ասացվածը թարգմանեց տիկնոջը և փակեց երեկույթը։

Մենք դուրս եկանք։ Ախորժելի հով էր փչում ծովից։ Խաղաղ գիշեր էր և լիալուսինը լողում էր ծովի ջրերում։ Մեր գլուխները տաքացած էին հին գինու շոգիներից, ուստի շոգեթափ լինելու համար, մի կես ժամ էլ զբոսնեցինք ծովեզերքում և հետո բաժանվեցինք, գնացինք, որ մյուս օրը վերստին հավաքվենք, գնանք մի պտույտ անելու «վերեր»ում, ծովանկարչի առաջնորդությամբ, ինչպես պայմանավորվել էինք։

Մյուս օրը ժամը 11-ին մենք արդեն պատկերասրահում էինք, սպասում էինք ծովանկարչին։ Շուտով նա էլ եկավ, և մենք ուրախ զվարթ գնացինք մեր պտույտին։ Ասելխոսելով բարձրացանք վերև։ Այդտեղից ո՛չ միայն ծոցը, այլև ամբողջ ծովն իր ընդարձակ, անեզր տարածությամբ, հայելու պես պարզ, մեր առաջն էր. մենք հմայված կանգնել, նայում, նայում էինք և չէինք կշտանում։ Այվազովսկին բարձրաձայն ասաց մեզ.

— Է՞յ, տղա՛ք, եթե մենք այդպես կանգնենք, մեր պտույտը շատ կերկարի։ Զմոռանանք, որ մեր նախաճաշը Թաթարի ղայֆեխանումն է ժամը 1-ին։ Ես արդեն իմաց տվել եմ Թաթարին։

Առաջին նվագ մենք կանգնեցինք Այվազովսկիների հին տան առաջ, որի մեջ ծնվել, մեծացել էին երկու եղբայր Այվազովսկիները։ Այդտեղ, այդ տան մեջ են ապրել ու վախճանել Կոստանդին և Հռիփսիմե Այվազյանները։ Տան առաջ էլ գտնվում էր մի աղբյուր, որ կոչվում էր Այվազյանների անունով «Հռոփենց աղբյուր»։

— Իսկ որտե՞ղ են եղել «հողե տներ»ը, որոնց մեջ ապրել են Ղրիմի հայ բարեպաշտ ճգնավորները և գրել իրենց ձեռագրերը,— հարցրի ես։

Նա պատասխանեց.

— Հենց այդտեղ, քաղաքիս այս վերին մասերում, որտեղ այն ժամանակները տակավին բնակչություն չի եղել։ Ապա, մենք ճգնավորներ էլ ենք ունեցել, որոնք ձեռագրեր են գրել։ Ես ուզում եմ ձեզ ցույց տալ և Ս. Նիկողայոս եկեղեցու ավերակները, որ շինված է եղել այս բարձրության վրա, բայց չեմ գտնում։ Եկեղեցին, ասում են, շատ լավն է եղել, հին երկար արձանագրություն է ունեցել։ Դրա շինողներն էլ Ղրիմի երկրորդ մեծ գաղթականության իշխաններն են եղել, որոնք եկած են եղել Հայաստանի Սյունյաց երկրից։

Այո, ծովանկարիչը մի բան այդ մասին լսած է եղել իր մեծերից, բայց ոչ լիակատար։ Երկրորդ մեծ գաղթականություն Ղրիմ եղել է Շահ Աբբաս մեծի ժամանակները։ Ս. Նիկողայոս եկեղեցու շինողն է եղել Տրդատ իշխանը իր քրոջ՝ Աննայի հետ միասին, բարձր լեռան վերա, ի հիշատակ 1475 թվի հայ նահատակների և իրենց ծնողների, և իրենց անունները գրել են տվել եկեղեցու արտաքին դռան վերա։

Այդ Տրդատը և Աննան են եղել, որոնք գրել են տվել և մեր քանիցս հիշած Ղրիմի գաղթականության պատմության նշանավոր «Հայսմավուրքի հիշատակարան»ը։ Այդ Ս. Նիկողայոս եկեղեցու անունով է, որ շինել են իրենց նույնանուն եկեղեցին նոր-Նախիջևանցիք։

Այնուհետև ծովանկարիչը մեզ առաջնորդեց Թեոդոսիայի թանգարանը, որի փոքր, բայց կոկիկ շենքը նույնպես կառուցված է այդ բարձրության վերա։ Շնորհիվ ծովանկարչի, մեզ ընդունեցին մեծ պատվով։ Առանձին ուշադրության արժանի էին թան-

գարանում հնագույն դրամները, որոնք գտնըվել էին ծոցի քարափը շինելու ժամանակները և Անվռ անունով կոչված հին դռները, որոնք Այվազովսկիների ընծան են թանգարանին։ Այդ, ինչպես և Ս. Սարգսի հին դրամաքրել են արձանագրության հետ միասին։ Այդ էլ այդպես պատմվում էր, իբրև ավանդություն։

Վերջինը, որ մեզ ցույց տվեց ծովանկարիչը, մի մատուռ էր Աստվածամոր անու-



Հայ ժողովրդի մկրտությունը
(Նկար Այվազովսկու)

ները, Անիից բերված են համարվում, բայց այդ՝ ըստ ավանդության և ոչ հավաստի։ Նոր-Նախիջևանի Ս. Խաչ վանքում էլ եղել է մի այդպիսի իսկական արձանագրությամբ վկայված դռան փեղկ, որ վանքում գործ են ածել դրսում թեյ խմելու ժամանակ իբրև սեղան, և, երբ շատ աղտոտվել է, քերիչով նով, որ փլված է եղել և վերաշինվել Գաբրիել վարդապետ Այվազովսկու ձեռքով։ Թեոդոսիացվոց ուխտատեղին էր այդ։

Իջանք վայր, Թաթարի սրճարանը, որտեղ պիտի նախաճաշեինք։ Թաթարը սպասում էր, ուշացել էինք։ Նա, ի պատիվ ծովանկարչի, զարդարել էր սրճարանը և փակել մուտ-

քը իր մշտական հաճախորդների առաջ։ Ուտելիքները և ըմպելիքները պատրաստ էին, բոլորն էլ Ղրիմի։ Սուրճի անուշ հոտը տարածված էր սրճարանում։ Բոլորվեցինք սեղանի «շորս դին»։ Մատուցին տաք տաք շըռշըռ սամսան, խզալմուխ շայը խայմայով, բոզան, տաք խալաջը, պանիր կանաչիներով ըստ արևելյան սովորության։

— Դե՞հ, տղա՛ք, անուշ արեք, ուշացանք, ախորժակներդ բացված կլինի,— ասաց ծովանկարիչը։— Ես ամենին մենք սովորել ենք, չգիտենք դուք ի՞նչպես եք։

Ծովանկարիչը, Մազերովը և Թեմենշյանը սովոր էին և ուտում էին ախորժակով։ Ես էլ երկար տարիներ ապրած լինելով Նոր-Նախիջևանում, ընտելացել էի նրանց ուտելիքներին և խմելիքներին, որոնք նույն Ղրիմինն էին, միայն Նոր-Նախիջևանցիք այդ բոլորը պատրաստում էին կարագի վերա, իսկ Ղրիմում՝ դմակի։ Նախիջևանում, պետք է ասել, որ այդ բոլորը պատրաստում էին ավելի նուրբ, Ղրիմում՝ ավելի նախնական ձևով։ «Բոզա»ն, որ պատրաստվում էր կորեկից գարեջրի նման, Նախիջևանում արդեն վերացել էր։ «Սամսա» Նախիջևանում ասում են կարկանդակին, որն այնպես նուրբ են պատրաստում, որ երբ բերանդ ես տանում, ջուրը միջից թափվում է, ուստի և ասում են «շըռշըռ սամսա»։

Երբ նախաճաշը վերջացրինք, դուրս եկանք սրճարանից, ընկերությամբ ճանապարհ ձգեցինք ծովանկարչին մինչև իր վիլլան, որտեղ մեր խորին շնորհակալությունը հայտնելուց հետո, բաժանվեցինք, հեռացանք։

Մեր վերադառնալու ժամանակը մոտենում էր։ Օգոստոսի կեսն էր արդեն։ Երբ այս մասին խոսակցություն բացվեց պատկերասրահում, կարծես թե ծովանկարիչը տխրեց և ասաց.

— Էհ, ի՞նչ պիտի անեք, գործի տեր եք, պետք է գնաք, բայց Ղրիմի ամենալավ ամիսներն են. խաղողը հասնում է, պտուղները, զենջերմեն... շիտակն ասեմ, ես ալ կասես թե սովրեցա ձեր գալ ու գնալուն, ձեր ասել-խոսելուն, էյ, իշտե...

Որոշել էինք վանք գնալ տեսնելու։ Ծովանկարիչը պիտի մեզ առաջնորդեր։ Մազերովն էլ խոստացել էր մեզ հետ գալ։ Նախիջևանից էլ եկել էին երկու ծանոթ օրիորդ, որոնք նույնպես ցանկացան մեզ ընկերանալ։ Պայմանավորվել էինք նախաճաշիկը անել Էսկի-Խրիմում, ճաշը՝ վանքում, և նույն օրն էլ վերադառնալ։

Պայմանավորված օրը, առավոտյան կանուխ, երկու կառքով գնացինք։ Ժամանակին հասանք Էսկի-Խրիմ։ Հայ ավան էր, կանաչ, անտառոտ լեռների մեջ կորած։ Հանգստացանք, նախաճաշեցինք և բուլղարնոցը (բուլղար գաղութ) անցնելով, մտանք հոնի անտառները։ Ճանապարհը շարունակ բարձրանում էր լեռն ի վեր, մինչև որ հասանք և կանգնեցինք վանքի երկաթե դարպասի առաջ։ Վանահայրը դուրս եկավ մեր առաջ և սիրալիր ընդունելություն ցույց տվեց։ Ճիշտ որ տեղը շատ գեղեցիկ էր. վանքը գտնվում էր բարձր լեռան լանջին, որտեղից մի սիրտ հանկուցիչ տեսարան էր բացվում դեպի հեռուն, անծայրածիր անտառները. կարծես մի անեզր ծով լիներ։ Իսկ և իսկ հանգստանալու տեղ էր, հեռու քաղաքների ժխորից, բնության գոգում։ Աղբյուրի սառը ջրով ձեռներս, երեսներս լվացինք և վանահոր առաջնորդությամբ գնացինք վանքը նայելու։ Տաճարը մի փոքրիկ, սիրուն եկեղեցի էր, պայծառ, լուսավոր։ Վանահոր սենյակները և մյուս վանքապատկան շինարարությունները կոկիկ, մաքուր, հնացածները նորացրած, քանդվածները վերաշինված։ Ամեն բանից երևում էր, որ հսկող, հոգացող աչք կա, որի համար պարտք համարեցինք մեր գոհունակությունը և շնորհակալությունը հայտնել վանահայր Մելիք-Թանգյանին։ Զուր չէր ծովանկարչի գովասանքը։

Ճաշի սեղանը պատրաստված էր աղբյուրի մոտ վայելչությամբ։ Ճաշեցինք, հանգստացանք և վերադարձանք տխուր, շատ տխուր մտածմունքներով։ Ուշ երեկո էր, որ մենք հասանք քաղաք։ Ճնշված այդ տխուր մտածողություններով, վերադարձա տուն, և հոգնած, ջարդված, իսկույն անկողին մտա։ Բայց քունը մոտ չէր գալիս ողորմելի աչքերիս. սիրտս էր լաց լինում, սիրտս, մինչև որ ջերմ, առատ արցունքը չթրջեց աչքերս և չհանգստացրեց ներքին հուզմունքս։

Առավոտյան զարթնեցի գլխացավով։ Ջերմաչափ դրի, ցույց տվեց 37։ Էհ, ուրեմն մի բան կար, պետք էր զգուշ կենալ։ Այնուամենայնիվ, վեր կացա, բայց լոգարան չգնացի։ Ժամը 12 էր, որ դուրս եկա։ Միտքս էր տեսնել ծովանկարչին, որ հաշիվ տված լինեմ նրան, թե ի՞նչպես գնացինք, ի՞նչպես վերադարձանք և ի՞նչ տպավորություն ստացանք։ Գիտեի, որ նա սպասելիս կլիներ։

Երբ ես եղա նրա մոտ, նա ինձ ասաց.

— Ես ցավում եմ, որ չկարողացա ընկերանալ ձեզ վանք գնալու ժամանակ։ Այժմ ես և տիկինս ուզում ենք ծովը ցույց տալ ձեզ։

— Ի՞նչ եք ասում, ծովը միշտ մեր առաջն է,— պատասխանեցի ես, ծիծաղելով։

Հայ զինվորի երդումը Հայրենիքի պաշտպանության համար
(Նկար Այվազովսկու)

— Չէ՞, մենք կուզեինք ձեզ հետ մի ծովային զբոսանք կատարել։ Մեր տանը կերակուր կուտենք, հետո բարկաս կնստենք և կլողանք հեռո՞ւ, հեռո՞ւ ծովի խորքը։

— Ձեր կամքն է, արե՛ք ինչպես կամենաք, մենք ձեզ երախտապարտ ենք, երախտապարտ էլ կմնանք... Հատկապես իմ առ ի սրտե շնորհակալությունը կխնդրեմ մատուցանեք տիկնոջը՝ նրա սիրելության համար,— ասացի ես, և սրտաշարժված, դուրս եկա։

Պատահեցի բարեկամներիս։ Նրանք զբոսնում էին ծովեզերքում. Մազերովն էլ նրանց հետ էր։ Ես հայտնեցի նրանց ծովանկարչի և կնոջ հրավերքի մասին և ավելացրի, որ ես միանգամայն սրտաշարժված եմ նրանց վերաբերմունքից. ի՞նչ են տեսել նրանք մեր վարմունքի մեջ իրենց նկատմամբ։

— Երթանք ակումբ,— ասաց Մազերովը,— դուք նույնն է, պետք է ճաշեք, ես էլ եմ ուզում այսօր ձեզ հետ ճաշել, այնտեղ կխոսենք։

Ծովանկարչի և նրա պարկեշտ կնոջ հյուրասիրությունը տեղի ունեցավ վիլլայի դահլիճում, որի մեծ, լայն լուսամուտները բացվում էին պատշգամբի վերա, որտեղ մենք մի անգամ չէ, որ ուրճ ու թեյ էինք վայելել և ծովի հովերով զվարճացել։ Մենք բոլորվել էինք առատ սեղանի «շորս դին», ինչպես ասում էր Հովհաննեսը, այսինքն՝ շորս կողմը։ Օտար մարդ չկար, մենք էինք։ Բերին ծաղկեփունջերը, որ Մազերովն էր պատրաստել տվել քաղաքի ամենահայտնի ծաղկանոցում ժամանակի ընտիր ծաղիկներից։

Ես վեր կացա տեղիցս և փնջերից մեկը հենց այնպես ինչպես որ կար, իր ծաղկամանով, առա և դրի ծովանկարչի առաջ, մյուսը՝ տիկնոջ առաջ և վերադառնալով տեղս, բաժակ բարձրացրի նրանց կենացը և այդ առթիվ մի երկու տաք խոսք ասացի։

— Մենք այդ ծաղիկները,— ասացի,— որոնք քաղված են քաղաքիս ամենալավ ծաղկանոցից և ամենաընտիր հոտավետ տեսակներից, նվիրում ենք ձեզ ո՛չ իբրև ցույց, ո՛չ իբրև արտաքին երևույթի համար, այլ իբրև առ ի սրտե խորին շնորհակալություն ձեր մեզ ցույց տված սիրալիր ընդունելության և օգնության համար։ Խմում ենք ձեր կենացը, ցանկանալով ձեզ՝ հանճարե՛ղ ծովանկարիչ և պարկե՛շտ տիկին, երկար կյանք։ Վաղը մենք պետք է մեկնենք երեկոյան նավով։ Ձենք ասում ձեզ մնաք բարյավ, այլ՝ ցտեսություն Նախիջևանում, որ ձեզ օտար չէ, այլ հարազատ։

Ծովանկարիչը բացվեց, ուրախացավ և պատվիրեց տիկնոջը Ղրիմի «օյին հավան չալել», այսինքն պարի եղանակը նվագել, և ինքը ձեռքերը բարձրացրեց և ցույց տվեց թե Ղրիմում ի՞նչպես են պարում։ Մենք էլ հետևեցինք նրա օրինակին, և ուրախությունը ընդհանրացավ։ Խմում էինք, պարում էինք, բաժակաճառեր էինք արտասանում, ծափահարում իրար։

Եկան, ասացին, որ «բարկաս»ը պատրաստ է։ Դուրս եկանք, նստեցինք նավը և մարդ ու կին տարան մեզ ծովը ցույց տալու, և իսկապես քաղաքից ծովը չէր երևում, այլ միայն ծոցը։ Դրա համար էլ բարկասով էինք գնում, և ոչ թե սովորական նավակով։ Բարկասը ավելի մեծ է, ավելի խոր է նստում ջրի մեջ, շորս թիավարով է լողում, երկուսը մի կողմից, երկուսը մյուս կողմից։ Օրն երեկոյանում էր, ծովը խաղաղ ծփծփում էր։

Մենք բոլորս մի մի բաժակ ավելի էինք խմել, ուստի և ասում, խոսում, ծիծաղում էինք։ Ամենքիցս ավելի ուրախանում էր ծովանկարիչը. նա ձեռքը ջրից չէր հանում, ջուրը բուռն էր առնում, վեր շպրտում և ասում.

— Աչքը սիրեմ, մի սրա պարզությա՞ն նայեցեք։ Նորերը իմ նկարներիս չեն հավանում, ասում են, որ իմ նկարները մտացածին, անբնական են։ Զարմանալի է։ Պատիվս վկա, ես ծովը ճանաչում եմ երկու մատիս նման, նրա բոլոր տեսակ կացության մեջ. ես ծնվել եմ նրա եզերքին, սնվել, մեծացել եմ նրա եզերքին, և ապրում եմ նրա եզերքին... ծովն իմ տարրն է...

Վերադարձանք, արդեն մութն էր։ Մի մի բաժակ թեյ էլ վայելեցինք և համբուրելով տիկնոջ ձեռքը և գրկախառնվելով ծովանկարչի հետ, մնաս բարյավ ասացինք և բաժանվեցինք։

Մյուս օրն երեկոյան, ինչպես ասացի, պետք է մեկնեինք։ Պատրաստվելու համար սակայն մի առանձին հոգացողություն չունեինք. նավի տոմսակները առնված էին, տան հաշիվը տեսնված էր։ Պարզվեց, որ ապարանքը, որի մեջ սենյակ էի վարձել ես, Այվազովսկիներինը չէր, այլ նրանց քրոջ ամուսին թիֆլիսաբնակ ունևոր Աղեքսանդր Թայիրյաններինը։ Հոգացողություն չունենալով, հանգիստ քնեցի, առավոտյան մի վերջին անգամն էլ լոգարան գնացի, «աչքը սիրեմ» ասացի, ինչպես որ ասում էր ծովանկարիչը, և նավի մեկնելուց մի կես ժամ առաջ գնացի նավահանգիստ։

Նավը բեռնավորվում էր, և հաճախ լսվում էր «Մայնա» և «Վեռա» շղթաների իջեցման և բարձրացման շառաչյունը։ Եկան և մերոնք, եկավ և Ներսես Մազերովը, մեր սիրելի և հավատարիմ ընկերը։ Վերջապես, անսպասելի, եկավ և ծովանկարիչը իր տիկնոջ հետ և մենք կրկին գրկախառնվեցինք և քաղցր համբույրներով բաժանվեցինք և բարձրացանք նավը։ Հնչեց վերջին զանգակը, կամուրջը բարձրացավ, և նավը դանդաղ շարժվեց և հետզհետե արագացնելով իր ընթացքը, հեռացավ Ղրիմի հյուրընկալ ափերից։

Անցան տարիներ։ 1895 թվին եկավ Նորնախիջևան Տեր Մկրտիչ Ա. Խրիմյան կաթողիկոսը, երեք թե ավելի ամիս մնաց և հետո մեկնեց Պետերբուրգ՝ կայսեր տեսության։ Ահա այդ ժամանակներն էլ եկավ և ծովանկարիչ Այվազյանը իր կնոջ հետ, և ես առիթ ունեցա երկրորդ անգամ տեսնելու նրանց։ Նրանք իջևանել էին «Ռոստով» հյուրանոցում։ Ես գնացի տեսության։ Ծովանկարիչը շատ ծերացել էր, բայց տակավին աշխուժությունը չէր կորցրել։ Նա ման էր գալիս հաստատուն ոտքերով, ուրախ ուրախ, ըստ իր սովորության, ասում, խոսում էր,

ծիծաղում։ Տիկինը չէր կորցրել իր գեղեցկությունը, բայց հաստացել էր և նախկին նազելին չէր։ Շատ խոսեցինք, հիշեցինք անցյալը, մեր պատկերասրահի զրույցները, մեր ուսուցիչները, ծովային զբոսանքը։ Նա պատմեց ինձ իր գալու պատճառը։

Ես հրավիրեցի նրանց թեմական դպրանոց, որ ցույց տված լինեմ նրանց դպրանոցը և նրա այն պայծառ դահլիճը, որտեղ պետք է կախված լիներ ծովանկարչի մի նկարը, որը գնված էր 10,000 ռուբլով և նվիրված թեմական դպրոցին։ Այդ՝ «Նոյի էջքը Արարատից» (Տապանից) նկարն էր։ Ծովանկարիչն իր հետ բերել էր և մի ուրիշ փոքրիկ նկար՝ «Ծովում փոթորիկի հանդիպած նավը», որ նա նույնպես նվիրեց դպրանոցին, ի հիշատակ իրենց դպրանոցին արած այցելության։

Վերջին անգամ ես տեսա նրանց այն բանկետի օրը, որ սարքել էին նախիջևանցիք ի պատիվ Վեհափառ Կաթողիկոսի, որ պիտի արդեն մեկներ Մոսկվայի վրայով Պետերբուրգ։ Բանկետին հրավիրված էր և ծովանկարիչը։ Երբ նա մտավ հացկերույթի դահլիճը, հրավիրյալները, որոնք արդեն բոլորվել էին հացկերույթի սեղանի շորս կողմը, պատվեցին նրան՝ տեղերից վեր կենալով, կանգնելով, իսկ Վեհափառը հրավիրեց իր մոտը նստելու։ Բանկետը բացվեց Վեհափառի հայտնի ճառով «Հովվի և ոչխարների մասին», որով նա կոչ էր անում օգնության հասնել սասունցի փախստականներին, որի հետևանքն եղավ երեսուն հազար մի գումարի հավաքումն ու մատուցումը Վեհափառին, ի գործադրություն։

Ծովանկարիչը վերջացրած լինելով իր գործը, պիտի վերադառնար։ Գնացի ճանապարհ ձգելու։ Նա համակված էր տխուր տրամադրությամբ։ Նա ասում էր, որ հույս չունի այլևս տեսնվելու, և համբուրեց ճակատս. ես էլ համբուրեցի նրանց ձեռքերը, և նրանք գնացին։ Եվ ես այլևս չտեսա նրանց...



Այվազովսկու գերեզմանը

Վրա հասավ 1900 թվականը, և լրագրերը գուժեցին նրա մահը։ Նա թաղվել է Թեոդոսիայի Ս. Սարգիս եկեղեցու բակում։ Նրանից հետո, կինը դեռ ապրում է եղել։ Չգիտեմ թե ո՞ր թվին, նա էլ վախճանվել է՝ կտակելով իրեն թաղել իր ամուսնու դամբարանում։

Սույն հոդվածում զետեղված բոլոր լուսանկարները արտահանված են Հայկ. ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Արվեստի պատմության սեկտորի նյութերից։— ԽՄԲ.։